ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԶԵԿՈՒՅՑՆԵՐ
ДОКЛАДЫ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК АРМЕНИИ

Том 99 1999 №4

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

УДК 621.391.254

Վ. Ռ. Ղազարյան

Բիայնական սեպագրերի կոմպյուտերացումը

(Ներկայացված է Հայաստանի Գ.ԱԱ ակադեմիկոս Յու.Հ.Շուքուրյանի կողմից 3/VIII 1999)

Կոմպյուտերային տեխնիկայի հույժ արագ զարգացման հետ կապված վերջին տարիներին խնդիր առաջացավ բիայնական սեպագիր արխիվը տեղափոխել կոմպյուտերի հիշողություն: Այդ խնդիրը հեշտությամբ լուծելի է սեպագրի լատինատառ տառադարձության կիրառմամբ: Սակայն մինչ օրս ստեղծված չէր այնպիսի միջոց, որը հնարավորություն տար այդ ամենն իրականացնել առանց սեպագիրը տառադարձելու: Այսօր այդ միջոցը ստեղծված է: Կոմպյուտերի համար գրված այս տառատեսակը մեր կողմից ստեղծվել և վերջնականապես մշակվել է 1998թ.: Տառատեսակի կոմպյուտերային անունն է Cuneiform.ttf:

Սեպագիրը կոմպյուտերի հիշողություն ներմուծելու խնդրի բարդությունն այն էր, որ սեպագիր նշանների քանակը ընդհանուր առմամբ 1000-ի չափ է, իսկ կոմպյուտերի ստեղնաշարի ընձեռնած հնարավորությունները թույլ չեն տալիս 101-102 նշանից ավել առանձին սիմվոլ ներմուծել: Մինչ օրս դա արվում էր անարդյունավետ, ոչ օպտիմալ և խիստ աշխատատար կերպով. յուրաքանչյուր տեքստ նախ ձեռքով արտագրվում էր և ապա սկաներով ներմուծվում կոմպյուտեր:

Բիայնական սեպագիրը ասուրականի մի պարզեցված տարբերակ է, որում նախ պակասեցվել է մեկ նշանին համապատասխանող վանկերի և իմաստների քանակը և, որն ամենակարևորն է, վերացվել է սեպի մի անկյունից շարունակվող գիծը: Որպես օրինակ կարելի է բերել հետևյալ երկու նշանների ձևափոխությունը՝ կապված բիայնական գրային ռեֆորմի հետ:

	Ասուրական	Բիայնական
աշ		
մաշ		

Այս պարզեցումը թույլ է տալիս բիայնական սեպագիր նշանները տարրալուծել մի քանի պարզագույն բաղադրիչների: Օրինակ, նույն «աշ» վանկը կարելի է վերածել երկու պարզագույն ուղղահայաց բաղադրիչի՝ և , երբ ասուրականում

Cuneiform .ttf

A	a	B	b	C	c	D	d	E	e	F	f	G	g	H	h
I	i	J	j	K	k	L	l	M	m	N	n	O	o	P	p
Q	q	R	r	S	s	T	t	U	u	V	v	W	w	X	x
Y	y	Z	z	1	!	2	@	3	#	4	$	5	%	6	^
7	&	8	*	9	(	0	)	_	-	+	=	{	[	}	]
:	;	"	'	|	\	<	,	>	.	?	/	~	`		

դա գործնականորեն անհնար է: Նույն բաղադրիչը մտնում է, օրինակ, «ա» վանկի կազմի մեջ, որն իր հերթին վեր է ածվում և ուղղահայաց բաղադրիչների և այսպես շարունակ: Աշխատանքի ընթացքում պարզվեց, որ նման բաղադրիչների քանակը անհամեմատ ավելի քիչ է, քան բիայնական սեպագրում օգտագործված նշանների քանակը: Այսպիսով, ունենալով անհրաժեշտ բաղադրիչների լրիվ բազմություն (բազիս), կարելի է հավաքել ցանկացած բիայնական սեպագիր արձանագրություն: Սա է մեր մեթոդի էությունը:

Սակայն նշենք, որ խնդիրը լուծելի է միայն բիայնական, պարսկական և ուգարիթյան (պարզեցված) սեպագրերի համար: Շումերական, աքադական, ասուրական, էլամական և այլ սեպագիր գրային համակարգերի համար այս մեթոդով այն գործնականում անլուծելի է:

Ստորև ներկայացնում ենք տառատեսակի ստեղնաշարային նշանացանկը:

Ստորև, որպես օրինակ, բերենք այդ տառատեսակի (ծրագրի) օգնությամբ տպված սեպագիր մի քանի հատուկ անուն.



Արգիշտի

Մենուա

Սարդուրի

Տուշպա քաղաք

Բիայնա երկիր

В. Р. Казарян

Компьютеризация урартской (биайнийской) клинописи

Общеизвестно, что урартская монументальная клинопись восходит к новоассирийской клинописной системе. Известно также, что при заимствовании урартская клинопись, претерпев изменения, значительно упростилась, вследствии чего существенно сократились значения одного символа и несколько изменилась форма знаков. Благодаря этому стало возможным разбиение знаков урартской клинописной системы на составляющие части, число которых намного меньше числа символов в исходной системе, что и позволило совместить их с клавиатурой компьютера. В результате любой урартский клинообразный текст можно набрать на компьютере.